Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի Հովհ. Հովհաննիսյանի անվան հիմնական դպրոցի հայրենագիտական առարկաների

Մեթոդական միավորման 2022-2023 ուստարվա աշխատանքային պլան

Հաստատում եմ

29. 08. 2022թ.

| Գործողություն | Ժամանակահատված | Կատարող | Արդյունքների ամփոփում |
|---|---|---|---|
| ա.2022-2023 ուստարվա մեթոդմիավորման աշխատանքային պլանի մշակում:<br>բ.2022-2023 ուստարվա դասաբաշխման մասին:<br>գ.Անդրադարձ առարկայական թեմատիկ պլանավորմանը և օրվա դասի պլանին ներկայացվող պահանջներին:<br>դ.Մեթոդմիավորման անդամներին հատկացված խմբակների նպատակային օգտագործման մասին:<br>ե.օգոստոսյան խորհրդակցության ժամանակ քննարկված հարցերի ներկայացում:<br>զ.Ծանր և խորը մտավոր խնդիրներ ունեցող աշակերտների գնահատման հարցերի քննարկում: | 1-ին նիստ<br>Օգոստոս | Մասնախմբի անդամներ<br>Բազմամասնագիտական խումբ | Կատարված է |
| Ա.Միջին դպրոցի 5-րդ դասարաններում գրավոր աշխատանքների անցկացում սովորողների լեզվական գիտելիքների ստուգման նպատակով:<br>բ.Ծանոթացում հանրակրթության պետական նոր չափորոշչի հիմնական դրույթներին:<br>գ.Զեկուցում-,,Աշակերտների բանավոր խոսքի զարգացումը հանրակրթության կարևոր խնդիրներից է,,: | 2-րդ նիստ<br>Սեպտեմբեր | Նախագահ՝ Ա.Հարությունյան<br>Տնօրենություն<br>Մասնախմբի անդամներ<br>Ա.Գալստյան | |
| դ.Քերականական իմաստ արտահայտող խոսքի մասերի ուսուցման առանձնահատկությունները/փորձի փոխանակում,փոխադարձ դասալսումներ/: | | | |
| Ա.Հայրենագիտական առարկաների նկատմամբ | | | |

| | | | |
|---|---|---|---|
| սովորողների հետաքրքրությունը բարձրացնող միջոցների հայեցակարգի քննարկում և կազմավորում:<br>բ.Մխիթարյանների 300-ամյա գործունեությունը/զեկուցում ԱԳԽ-ում/:<br>գ.Ուսուցման նոր մեթոդների կիրառման անհրաժեշտությունն ու արդյունավետությունը պատմության և հասարակագիտության դասերին/դասալսումներ,փորձի փոխանակում/:<br>դ.Ինքնուրույն ընթերցանության կազմակերպման մեթոդները/Մանկավարժություն,2017թ.,հ.4/:<br>ե.9-րդ դասարանի աշակերտների ուխտագնացություն Սպիտակավոր եկեղեցի, Գ.Նժդեհի գերեզման: | 3-րդ նիստ<br>Հոկտեմբեր | Մասնախմբի անդամներ | |
| ա.Ներառական կրթության անհրաժեշտություն ունեցող սովորողների ընդգրկված ությունը դասապրոցեսին/քննարկում/:<br>բ.Զեկուցում-Անձի արժեհամակարգի ձևավորումը որպես հանրակրթության բովանդակայի առանցք:<br>գ.Վերլուծական էսսեներ գրելու հմտությունների ձևավորման և զարգացման մասին/նախագծային աշխատանք/:<br>դ.Օրինակելի դասեր գրականություն և հասարակագիտություն առարկաներից: | 4-րդ նիստ<br>Նոյեմբեր | Մասնախմբի անդամներ<br><br>Ա.Հարությունյան | |
| ա.Դասանպատակի հայեցակարգը հոգեբանական քննարկման առարկա:<br>բ.Առարկայական ծրագրերի կատարողականի հաշվետվություն:<br>գ.Ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում մասնախմբի կատարած աշխատանքների անփոփում:<br>դ.Թեմատիկ գրավոր ախշատանքների նախապատրաստման և անցկացման մի քանի հարցերի քննարկում/սովորողներին թեստային առաջադրանքների բովանդակությանը համապատասխան հարցախարերի | 5-րդ նիստ<br><br>Դեկտեմբեր | Մասնախմբի անդամներ | |

| | | | |
|---|---|---|---|
| նախապես տրամադրում/:<br>ե.Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի նախապատրաստական աշխատանքներիկազմակերպում: | | | |
| ա.Առարկայական շաբաթի քննարկում,ժամանակացույցի հաստատում:<br>բ.Սովորողներին ներկայացվող պարտադիր պահանջները պատմությունից,հասարակագիտությունից, հայոց եկեղեցու պատմությունից:<br>գ.Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի անցկացում, արդյունքների ամփոփում,հաջորդ փուլի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում:<br>դ.Հայոց բանակի օրվան ընդառաջ: | 1-ին նիստ<br>Հունվար | Մասնախմբի անդամներ<br>ՄԿԱ փոխտնօրեն | |
| ա.Մայրենիի առարկայան շաբաթի նախա յատրաստում և կազմակերպում:<br>բ.Միջին դպրոցի 7և 8-րդ դասարաններում հայոց պատմության և գրականության ստուգարքների նախապատրաստության հարցերի քննարկում:<br>գ.Առարկայական օլիմպիադաների մարզային փուլին երաշխավորված ախակերտների հետ լրացուցիչ աշխատանքների կազմակերպում: | 2-րդ նիստ<br>Փետրվար | Մայրենիի ուսուցիչներ<br>Մասնախմբի անդամներ | |
| ա.Պատմության և հայոց եկեղեցու պատմության առարկայական շաբաթի նախապատրաստում և անցկացում:<br>բ.Քաղաքացիակն կրթության դերը դպրոցում/կարծիք,Մանկավարժություն,2014.,հ.1/:<br>գ.Հաշվետվություն արտադասարանական ընթերցանության ընթացքի և արդյունքների մասին/մայրենիի ուսուցիչներ/:<br>դ.ԿԱՊԿՈՒ սովորողների կրթության և սոցիալիզացիայի հարցերի քննարկում; | 3-րդ նիստ<br>Մարտ | Մասնախմբի անդամներ<br>Բազմամասնագիտական թիմ | |

| | | | |
|---|---|---|---|
| ա.Զեկուցում-Միջառարկայական թեմաների միջոցով ձևավորվող կոմպետենցիաներ:Փոխադարձ դասալսումներ:<br>բ.,,Լավագույն ընթերցող,, միջոցառում/գրադարան/:<br>գ.Սովորելու ոճերի և ուղեցույցների դերը ուսումնական գործընթացում/քննարկում,Մանկավարժություն,2013թ,h17/:<br>դ.Ռաֆայել Լեմկինը և հայոց մեծ եղեռնը/զեկուցում ԱԳԽ-ում/:Երթ դեպի ցեղասպանության հուշարձան: | 4-րդ նիստ<br>Ապրիլ | Ռ.Կարապետյան<br>Մ.Մարգարյան<br>Մասնախմբի անդամներ | |
| ա.Ստուգել թեմատիկ պլանների կատարողականը,թեմատիկ գրավոր աշխատանքների առկայությունը և դրանց համապատասխանությունը չափորոշչայինպահանջներին:<br>բ.Քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին:<br>գ.Տարեկան ուսումնական ծրագրերի կատարողականի ստուգում,աշխատանքների ամփոփում:<br>դ.Նախնական դասաբաշխում;<br>ե.Ներկայացնել 2022-2023 ուստարվա աշակերտների առաջադիմության վերլուծությունը և եզրահանգումները:<br>զ.Ելնելով վերը նշված վերլուծությունից կատարել հաջորդ տարվա ուսումնական ծրագրերի ռազմավարության ընտրություն, գալիք աշխատանքների պլանավորում: | 5-րդ նիստ<br>Մայիս | Մեթոդմիավորման նախագահ<br>Մեթոդմիավորսան անդամներ | |